Բեսարաբիայի և միւս հարուստ վիճակներից տարին քառասնական հազարներ հանելով մի թշուառ և խայտառակ ճեմարանի պատրուակով, Էջմիածինը խնայում է մի կոպէկ անգամ ծախսել նոյն կեղեքված վիճակի հարիւր հազար հայերի մէջ Մեսրոպի տառերը ճանաչել տալու համար. հազարներով են խորթանում հայերը, կորցնում լեզուն, հոգին, ազգութիւնը, բայց նոցանից առած փողերով միայն օպերացիաներ են կատարվում մայրաքաղաքի լոմբարդներում: Բողոքում է ազգի հասկացող մասը և մինչև թուքը չորանալը խղճմտանք ու քրիստոնէական զգացմունք աղաղակում. կա՞յ արդեօք հէնց փոքր ինչ ուշադրութիւն դարձնող....

Նոյն իսկ Էջմիածնի վանքերի տակ խեղճ ժողովուրդը գանգատվում է, գետինը փռված ոտներ է համբուրում կրօնասէր ժողովուրդը, արդարութիւն ու գութ է պահանջում և վերջապէս յուսահատված, սիրտը թոյնով լի գնում է, հաւատափոխ է լինում: Ցանուն արդարութեան և ազգի շահերի հրապարակախօսը դարձեալ բողոքում է. ո՞ւմ երեսն է կարդում, ո՞վ է խղճահարվում, ո՞վ է լսում ազգի ձայնին....

Քսան-երեսուն տարվայ մէջ հինգ հազար լուսաւորչադաւան քաջ լեռնաբնակներ՝ ուտիացիք յունադաւան են դառել. առա՛ հինգ տարի ևս, զզուելով մի որ և իցէ Տէր-Գալուստի խարդախութիւններից, դարձեալ հազարներով յունադաւանութեան են դիմում. կա՞յ արդեօք մի սրտացաւ, մի հոգացող....

Քանի հարիւրներով կարելի է հաշվել այս տեսակ զեղծումներ և անիրաւութիւններ, որոնց մասին միանգամայն պատասխանատու լինելով ազգի ընտրած և նրա հաւատարմութիւնը վաստակած Էջմիածնի կառավարչական հոգևոր խումբը, ոչինչ ուշադրութիւն չէ դարձնում ազգի ձայնին, արհամարհելով նրան յանդուգն կերպով իր իմացածն է անում և անիրաւութիւնները առաջ տանում....

Հարցնում ենք ուրեմն. ինչ բարիք և ինչ բարեփոխութիւն կարելի է սպասել այն դէպքում, երբ Ս. Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցապատկան կալքերը, դուրս գալով Լազարեան վսեմ և անշահախնդիր տոհմի կառավարչութեան տակից, կընկնեն Էջմիածնի տնօրինութեան տակ և կը կառավարվեն մի հոգաբարձութիւնով, որի ցմահ և անփոփոխ նախագահները և վէքիլները կը լինեն ի հարկէ իր շահերի համար ազգը դաւաճանող մի քուրմ և նրա արժանի ընկեր վաշխառուն: Հարցնում ենք. ինչ կը վաստակեն արդեօք Ս. Պետերբուրգի և Մոսկվայի այժմեան հոյակապ և պայծառ եկեղեցիները, եթէ ընկնեն այսպիսի վամպիրների ձեռքը: Երբ ալաշկերտցոց ակլորութիւնը ծածկելու համար կոպէկ կոպէկ հաւաքած 17,000 ր. համար հարիւր անգամ բողոք յայտնեց հայ լրագրութիւնը, երբ Կ. Պօլսի ազգային ժողովը ևս բոլոր տաճկահայերի կողմից դիմեց Էջմիածնին, բայց ոչինչ ուշադրութիւն չեղաւ, ինչ ուշադրութիւն կը դարձնեն ազգի ձայնին, երբ Ս. Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցապատկան կալքերը նաև աճուրդով ծախվեն և ընկնեն երկու անկուշտ վամպիրների գրպանը: Ո՞վ ինչ պիտի կարողանայ անել, երբ աւելի նշանաւոր չարիք և զեղծումներ կատարվում են այսչափ աշկարայ և այսչափ անամօթ կերպով... Եւ այս անիրաւ և անկուշտ վամպիրները դեռ այնչափ լրբութիւն ունեն, որ միայն իրանց նեղ և անձնական շահերի համար, էլ առանց կարմրելու, բացարձակ կերպով ագիտացիա են անում ռուս լրագիրների և մայրաքաղաքների հասարակութեան մէջ, ասելով թէ՞ այդ ամենը անում են նոքա ազգային շահերի համար և ազգի լեզուից խօսելով: Հետաքրքիր է իմանալ՝ ովքեր են կազմում նրանց ճանաչած ազգը. եթէ դուք կովկասցի հայերդ, կամ մենք ռուսահայերս— այդ մեզ բնաւ յայտնի չէ, իսկ եթէ նոքա՛, որոնք մի քանի տասնեակ թւով Ս. Պետերբուրգում և Մոսկվայում վաճառականի փոքրիկ խանութներ են պահում, ստրուկ լինելով մի վաշխառուի ձեռքին և վճարելով նրան քսան տոկոս, եթէ այդպիսիներն են ասվում «ազգ», այդ բանին մենք ոչինչ չունենք ասելու...

Մենք արդէն վաղուց էինք լսել, որ իշխ. Աբամելիք-Լազարևը նկատելով դժուարութիւններ միահեծան կերպով կառավարել մայրաքաղաքների եկեղեցապատկան կալքերը, մտադիր էր հաստատել մի մասնաժողով աշխարհական և հոգևոր անձինքներից, որոնց ձեռնհասութեամբ և իր վերահասութեան ներքոյ աւելի կանոնաւոր կերպով արդիւնաշահվէին ոչ միայն եկեղեցիները իրանց սեփականութիւններից, այլ և ուրիշ բարեգործական նպատակներ անգամ կալքերից մնացած աւելորդ հասոյթներից: Բայց մայրաքաղաքի մի խարդախ քուրմ, որը ոտից մինչև գլուխ պարտական է Լազարեաններին, որոնք նրան սնուցել են, ուսում ու դրութիւն տուել, այնչափ ապերախտ և յիմար գտնվեցաւ, որ ցանկացաւ գործին տալ դատաստանական ընթացք, երբ չը կարողանալով սանձահարել իր ինտրիգասէր և դաւաճանական կրքերը: Եւ նրա շնորհիւ երևի արդարադատութեան մինիստրը կը վճռէ գործը իշխ. Աբամելիքի օգտին, որը իր պատիւը վիրաւորված տեսնելով, գուցէ կը թողնէ իր մտադրութիւնը որ և իցէ մի յարաբերութիւն ունենալ մասնաժողովական հաստատութեան հետ եկեղեցական կալքերը տնօրինելու համար:

Մենք բոլորովին հասկանում ենք և համակրում իշխանի բարոյական դրութեան, բայց խստիւ գնահատելով այն մեծ օգուտը, որը տուել է Լազարեան տոհմը հայոց ազգին, զոհելով նրա համար մի քանի միլիոն ու դաստիարակելով հազարաւոր մարդիկ իր հաշւով ճեմարանի մէջ, մենք կը վստահանանք խորհուրդ տալ իշխ. Աբամելիք-Լազարևին ուշադրութիւն չը դարձնել մի կեղտոտ ու ապերախտ մարդու արարքներին, այլ իրագործել իր բարի և օգտաւէտ դիտաւորութիւնը, հաստատելով ժողովրդից ազատ կերպով ընտրած մի մասնաժողով, որը կարողանար օգնել նրան եկեղեցապատկան կալքերի տնօրինութեան մէջ: Մի գլուխ լաւ է, բայց մի քանիսը աւելի լաւ, մանաւանդ, երբ ընդհանուր օգտի համար է դա...

***

ՆԱՄԱԿ ՕԴԷՍՍԱՅԻՑ

—

Դեկտեմբերի 11-ին

Գերմանիայի հակահրէական շարժումը արձագանք գտաւ և Ռուսաստանում: Այստեղ ևս սկսեցին բարձրաձայն խօսել և գրել հրէաների դէմ: Պետերբուրգի հոգևոր ճեմարանի պրօֆէսսորներից մէկը մինչև անգամ մի ամբողջ պրօգրամմա հրատարակեց տեղական լրագիրներից մէկում այն անձանց համար, որոնք կամենում են նուիրել իրանց ժամանակը հրէական հարցին. պրօգրամմայի մէջ կէտ առ կէտ որոշած է, թէ ինչ բանի վրա առաւել պիտի ուշադրութիւն դարձնեն հրէական հարցով պարապողները, միայն ինքը, հեղինակը առ ժամանակ հրաժարվում է անձամբ գործին մասնակցելուց: Իսկ մեզ մօտ, Օդէսսայում հրատարակվող ռուս լրագիրներից մէկը՝ «Новороссійскій Телеграфъ», որ բաւական շատ տարածված է քաղաքի մէջ, իր ծնված օրից կարծես իրան համար նպատակ է դրել հալածել առ հասարակ հրէաներին, բայց մանաւանդ Օդէսսայի հրէաներին, որոնք այստեղ բազմաթիւ են և մի և նոյն ժամանակ շատ հարուստ. քաղաքի, այն էլ Օդէսսայի պէս նշանաւոր վաճառաշահ քաղաքի, առեւտուրը գրեթէ ամբողջապէս հրէաների ձեռքին է: Վեր առէք այդ լրագրի որ համարը կամենում էք, և դուք անպատճառ նրա մէջ, եթէ ոչ մի քանի, գոնէ մէկ յօդուած կամ մի լուր կը գտնէք, որտեղ անխնայ յարձակվում են հրէաների անբարոյական արարմունքների դէմ՝ հարստահարութեան, խարդախութեան, գողութեան, խաբեբայութեան, մոլեռանդութեան և այլն և այլն: Իր յօդուածներից մէկի մէջ ռուս լրագիրը պարզ ասում էր. այս երկիրը (այսինքն հարաւային Ռուսաստանը) հրէաներինը չէ. հրէաները այստեղ նորեկներ են, հիւրեր են, և իբրև հիւրեր իրաւունք չունեն տիրապետել երկիրը (ի հարկէ նիւթական միջոցներով). հրէաները սեպհական մայրենի լեզու չունեն այժմ. նրանք խօսում են աղճատված գերմանական մի բարբառով, ուրեմն և պիտի չունենան իրանց սեփական ուսումնարան, սեփական թատրոն և սեփական գրականութիւն... հարկաւոր է սահմանափակել հրէաների իրաւունքները բնիկ ժողովուրդը առաջ քաշելու համար. մրցել կարելի չէ հրէաների հետ, որոնք իսպառ մոռացած բարոյականութիւնը, ամեն միջոց գործ են դնում փող վաստակելու համար:

Այստեղի «Правда» լրագիրը, որի խմբագիրը մի հրեայ էր, մի քանի ժամանակ է որ դադարեցրած է, իբրև հասարակութիւնը գրգռող մի լրագիր: Մի ուրիշ հրեայ, որ երևի կամենում էր յարութիւն տալ հանգուցեալ «Правда» լրագրին, թէպէտ մի այլ անունով, թոյլտուութիւն չը ստացաւ կառավարութիւնից մի նոր լրագիր հրատարակելու:

Ինչպէս երեւում է լրագիրներից, Ֆրանսիայի մէջ ևս մի աղմուկ բարձրացաւ հրէաների պատճառով: «Gaulois» լրագրի խմբագիրը յանկարծ փոխելով իր ուղղութիւնը, առիթ տուաւ «Triboulet» լրագրին, որ մի նշանաւոր կուսակցութեան օրգան է, ծաղրելով յարձակվել հրէաների վրա և հրաւիրել ուրիշներին հալածելու սեմիտական ցեղը:

Այսպէս, ուրեմն, ամեն կողմից դարձեալ սկսել են նեղացնել հրէաներին: Երևի այս ժողովրդի ճակատագիրն է միշտ տանջվել, միշտ չարչարվել և միշտ հալածվել,—երևի այս է միայն Իսրայէլի որդոց բաժինը այս կեանքում: Եւ երբ և ո՞վ չէ հալածել սոցա. խաչապաշտ մոլեռանդ ամբոխը միշտ ատելութեամբ նայել է մովսիսականներին, իբրև քրիստոնէութեան թշնամիներին, և այդ պատճառով միշտ իրաւունք է տուել իրան տեղը եկած ժամանակ վրէժխնդիր լինել: Անցել են դարեր, դադարել են եկեղեցական վէճերը, դաւանութեան համբերողութիւնը ընդհանրացել է,—և ահա կրօնական մոլեռանդութիւնից ծագած հալածանքները տեղի են տալիս մի այլ տեսակ հալածանքների, որոնց պատճառները բուն քաղաքական և տնտեսական են: Այսօր՝ եթէ հալածում են հրէաներին, այդ այն պատճառով չէ, որ հրէաները մովսիսականներ են, այսինքն քրիստոնեաներ չեն, այլ այն պատճառով, որ մովսիսականութիւնը պինդ կապերով կապում է բոլոր հրէաներին միասին և այդպիսով կազմում է մի նեղ, սահմանափակ շրջան, որտեղ դարերով արմատացած անբարոյականութիւնը (ի հարկէ անկախ մովսիսականութիւնից) շարունակում է որդէցորդի ժառանգաբար անցնել, թունաւորել մատաղ հրեայ սերունդը: Եւ այս պատճառով հրէան՝ սկսելով, օրինակ, վաճառականութիւնը, ներելի է համարում գործ դնել ամեն միջոց, միայն թէ շուտով հարստանայ: Ուրեմն, կամ պէտք է յորդորել այն մարդկանց, որոնց հետ յարաբերութիւն ունեն հրէաները, գործ ածել այն բոլոր միջոցները, ինչ որ գործ են ածում հրէաները, կամ թէ, քանի որ այդ պախարակելի է, սանձահարել անբարոյական հրէաներին, ապա թէ ոչ՝ ազգաբնակութեան մի մասը նիւթապէս միշտ ճնշված կը լինի միւս մասից, թէև այդ մասը համեմատաբար սակաւաթիւ էլ լինի: Ազատ մրցումն անկարելի է այնտեղ, ուր կան երկու անհաւասար ուժեր:

Ս. Սաֆրազեանց

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Նոյեմբերի 26

Ինչպէս անցեալ տարի, այս տարի ևս պակաս չեն Տաճկահայաստանից ստացված լուրերը սովի մասին: Անցեալ տարվայ աղէտալի սովի միջոցին, նա, որի մէջ կար մարդկային զգացմունք, ազգայնութեան գաղափար, չը խնայեց իր լուման օգնելու իր կարօտեալ եղբայրներին: Ինչպէս միշտ, այս տարի ևս Ախալքալաքի հայ հասարակութիւնը չը մնաց անտարբեր ցցելու իր լուման սովի ալիքների մէջ, օգնութեան ձեռք կարկառելու իր քաղցած, յուսահատ և խեղդվող եղբօրը: Մեր հասարակութիւնը նուիրեց այդ գումարը խտրութիւն չը դնելով բաժանելու իր այլադաւան եղբայրների մէջ. թող աչքերը լաւ բանան մոլեռանդ խաւարասէրները:

Յարգոյ խմբագիր, նամակուս ծրարեալ կը գտնէք նուիրած գումարը և ստորագրվողների անունները և ազգանունները և չէք դժկամիլ շնորհել ձեր պատուական «Մշակի» մէջ տպագրելու ի միամտութիւն նուիրատուաց. ցուցակ նուիրատուաց:

Արժ. Խորէն աւագ քահանայ Բարսեղեանց 25 ր., պ. Արշակ Սաղաթելեանց (ախալցխացի) 25 ր., պ. Գասպար Շահպարոնեանց 10 ր., պ. Գրիգոր Բախչինեանց 15 ր., պ. Յովհակիմ Յովհաննջանեանց 50 ր., պ. Նազարէթ Թորոեանց 15 ր., պ. Կարապետ Պճճիկեանց 12 ր., պ. Մեսրոպ Պճճիկեանց 10 ր., պ. Սարգիս Վարդանեան Յարութիւնեանց 20 ր., պ. Կարապետ Մաղաքեանց 15 ր., պ. Յովհաննէս Տէր-Կիրակոսեան 10 ր., պ. Կարապետ Սիմեճեանց 3 ր., պ. Յովհաննէս Յարութիւնեանց 25 ր., պ. Յակոբ Ջոմարեանց 3 ր., պ. Յովհաննէս Ավանեանց 12 ր., պ. Յակոբ Ադամալեանց 5 ր., պ. Յակոբ Դարբնեանց 10 ր., պ. Գէորգ Պօղոսեանց 5 ր., Արժ. Եղիշէ քահանայ Տէր-Ղազարեանց 5 ր., Ախալցխոյ եկեղեցական կալուածոց արդիւնքից կառավարիչք նուիրեցին 100 ր., պ. Խաչատուր Մառանկոզեանց 10 ր., պ. Խաչատուր Մելքեանց 4 ր., պ. Մկրտիչ Գաժոեանց 5 ր., պ. Յարութիւն Մինասեանց 5 ր., պ. Վարդան Մուրադեանց 3 ր., պ. Կարապետ Դարբնեանց 4 ր., պ. Վարդան Տէր-Վարդանեանց 6 ր., պ. Յակոբ Պճճիկեանց 10 ր., պ. Մաղաքեայ Միրաքեանց 5 ր., պ. Յարութիւն Դիաթեանց 2 ր., պ. Խաչատուր Գէորգեանց 1 ր., պ. Եկոռ Յովսէփեան 1 ր., պ. Կարապետ մահտեսի Պօղոսեան 3 ր., պ. Միքայէլ Ինճիկեանց 3 ր., պ. Վահան Յովհաննէսեանց 4 ր., պ. Յարութիւն Բարսեղեանց 4 ր., պ. Պօղոս Տէր-Միրաքեանց 2 ր., պ. Յովհաննէս Աբրահամեան 2 ր., պ. Մարտիրոս Պարօեանց 2 ր., պ. Խաչատուր Աբրահամեան 2 ր., պ. Սիմէօն Մինասեան (արդուտցի) 1 ր., պ. Յարութիւն Մելքոեանց 2 ր., պ. Գրիգոր Ղուկասեանց 1 ր., պ. Յովհաննէս Ջլնկարեանց 1 ր., պ. Աւետիք Տէր-Թորոսեանց 1 ր., պ. Տիգրան Մանուկեանց 1 ր., պ. Ոսկան Պարօեանց 1 ր., պ. Գենէքսոս Քաջազնունի 6 ր., պ. Յովհաննէս Մնոյեանց 2 ր., պ. Խաչատուր Շահպարոնեանց 1 ր., պ. Սեդրակ Տէր-Վարդանգանց 1 ր., պ. Յակոբ Թէոսեանց 2 ր., պ. Յարութիւն Ապաճեանց 2 ր., պ. Յարութիւն Իսկանդարեանց 1 ր., պ. Յարութիւն Մանուկեանց 1 ր., պ. Խաչատուր Գրիգորեանց 20 ր., պ. Յարութիւն Մարգարեանց 10 ր., պ. Պետրոս Ադամեանց (տփլիսեցի) 1 ր., պ. Յովհաննէս Խտրեանց (տփլիսեցի) 1 րուբլ Յակոբ Կարախանեանց 20 կոպ., պ. Մելքոն Պճճիկեանց 1 րուբլ, պ. Սարգիս Յարութիւնեանց 2 ր., պ. մահտեսի Սարգիս Նալպանդեանց 5 ր., պ. Գրիգոր Աբէլեանց 3 ր., Սարգիս Շիրինեանց (գիւմրեցի) 1 ր., պ. Իսրայէլ Առաքելեանց (չիվլիկցի) 1 ր., պ. Յարութիւն Ազարիկեանց 3 ր., պ. Յակոբ Գասպարեանց 1 ր., պ. Ազարէգ Յարութիւնեան Սարգսեանց (ղարաբաղցի) 2 ր., պ. Յովհաննէս Սողոմեանց 50 կ., պ. Ազարապ Յարութիւնեանց 50 կ., պ. Աղէքսանդր Այվազեանց 1 ր., պ. Արգար Շուշարճեանց 1 ր., պ. Յարութիւն Ղազանճեանց 5 ր., պ. Անտոն Գրիգորեանց 1 ր., պ. Մանուկ Գրիգորեան 2 ր., պ. Խաչատուր Նալպանդեանց 1 ր., պ. Գէորգ Գաժոեանց 1 ր., պ. Կարապետ Ղազանճեանց 1 ր., պ. Ստեփան Նալպանդեանց 1 ր., պ. մահտեսի Թումաս Սապոնճեանց 3 ր., պ. Մկրտիչ մահտեսի Պապինեանց 3 ր., սարկաւագ Թադէոս Գասպարեանց 3 ր., պ. Յովհաննէս Շահբէգեանց (կուլիկամ գիւղից) 1 ր., պ. Մարգար Մարգարեանց 15 ր., պ. Մարգար 10 ր., պ. Կարապետ Կեցոեանց 2 ր., պ. Իվան Գրիգորեանց 2 ր., պ. Ներսէս Սիմճեանց 2 ր., պ. Կարապետ Սուճեանց 2 ր., պ. Փիլիպոս Տէր-Մերաքեանց 1 ր., կոպէկներով հաւաքվեցաւ քաղաքում 58 ր.: Գումարն է 645 ր. 20 կ.: Ընդամենն է վեց հարիւր քառասուն հինգ րուբլի և քսան կոպէկ:

Այս գումարից հարիւր րուբլի բաժանվեցաւ Տաճկահայաստանից այստեղ եկած խեղճ հայերին և փոստի ծախս երեք րուբլի, մնացեալ հինգ հարիւր քառասուն երկու րուբլի 20 կոպէկ ուղարկելով ձեզ խոնարհաբար խնդրումենք ուղարկել ուր հարկն է:

Գրիգոր Բախչինեանց և Յովհաննէս Յարութիւնեանց:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

10 դեկտեմբերի

Ճշմարտութիւնը աչք է ծակում. ճշմարիտ խօսողը գրպարտիչ է, իսկ ճշմարտութեան պաշտպանը՝ ցնդաբան: Քանի որ մի ազգի, մի ժողովրդի, խաւարի ու տգիտութեան մէջ խարխափող, հնապաշտութեան ու նախապաշարմունքների թանձր վարագոյրի տակ հեծող մի հասարակութեան առաջնորդ լինելու ամենածանր կոչումը յանձն կառնեն այնպիսի անհատներ, որոնք իրանց զարգացողութեամբ ոչինչով բարձր չեն, ոչինչով աւելի չեն նրանցից, որոնց իրանք առաջնորդում են,—այո, միշտ ճշմարիտը, ազնիւը, իդէալականը՝ աչք ծակող, արհամարհելի կը համարվի, քանի որ կոյրերը կոյրերին կառաջնորդեն—այդ է ճշմարտախօսների, ազնիւ անհատների, հասարակութեան սրտացաւ մշակների դրութիւնը: Բայց և որչափ նախապատիւ, որ-